

**«Շիրակի ուսուցիչների միություն» գիտակրթական կենտրոն ՀԿ վերապատրաստող  
կազմակերպություն**

**Ավարտական հետազոտական աշխատանք**

**Դպրոց** Ակադեմիական վարժարան  
**Առարկա** Անգլերեն  
**Թեմա** Օտար լեզուները թարգմանական աշխատանքներում  
**Կատարող՝** Սոնյա Հարությունյան  
**Ղեկավար՝** Կարինե Ալեքսանյան

**Գյումրի 2023**

# Բովանդակություն

Ներածություն.....	3
Գլուխ առաջին: Օտար լեզվի ուսուցման փուլեր և ոճեր,օտար լեզվի ուսուցման մեթոդները .....	4
Գլուխ երկրորդ: Օտար լեզուները թարգմանական աշխատանքներում.....	7
Գլուխ երրորդ: Թարգմանական մեթոդի կիրառումը օտար լեզվի դասավանդման գործընթացում.....	9
Գլուխ չորրորդ: Խորհրդածություններ Էդգար Ալան Պոլի «Լիգեյա» պատմվածքի հայերեն,ռուսերեն և անգլերեն թարգմանությունների շուրջ.....	14
Եզրակացություն և առաջարկություններ.....	21
Օգտագործված գրականության ցանկ.....	23

# Ներածություն

Ժամանակակից կրթական տարածքում կրթության և վերապատրաստման հիմնական նպատակը համակողմանի զարգացած անհատականության, ներդաշնակ անհատականության ձևավորումն է: Ուսուցումը կոնկրետ ներդրում ունի նման անհատականության ձևավորման գործում: Օտար լեզուների ուսուցման հիմնական նպատակն է երեխային առարկայի միջոցով ծանոթացնել լեզվական աշխարհին, ժամանակակից աշխարհի բազմալեզու և բազմամշակութային իրավիճակին հարմարվելուն:

Այս աշխատանքում խոսվելու է օտար լեզուները թարգմանական աշխատանքներում թեմայի շուրջ: Թարգմանությունը մարդկային գործունեության հնագույն ձևերից մեկն է: Լեզուների նախագրային շրջաններում անգամ կատարվում էին բանավոր թարգմանություններ մի լեզվից մյուսը, թարգմանվում էին բանահյուսական տարբեր երկեր՝ մասնավորապես հեքիաթները, ինչի վառ օրինակներն են թափառիկ սյուժեները՝ նույն հեքիաթի տարբերակները տարբեր ազգերի մոտ (որպես օրինակ բերենք թերևս «Կարմիր ծաղիկ» հեքիաթը, որ տարբեր անուններով և սյուժետային զանազան նրբերանգներով առկա է միմյանցից հեռու ապրող ժողովուրդների բանահյուսության մեջ): Թարգմանության դերը, անշուշտ, ավելի է կարևորվում գրային շրջանում: Թարգմանությունն օտար լեզվի ուսուցման մեջ գլխավոր և անփոխարինելի դեր ունի: Գոյություն ունեցող թեստային վարժությունների բազմազանության հետ մեկտեղ, թարգմանությունը շարունակում է իր ուրույն տեղն ունենալ ուսուցման գործընթացներում, չնայած այն հանգամանքին, որ որոշ դեպքերում այն անտեսվել կամ դուրս է մղվել ուսուցման ծրագրերից, գիտելիքների ստուգման համակարգերից: Հատկանշական է, որ բացի իմաստի փոխանցումից, այն նաև մեծապես նպաստում է լեզվական մի շարք հմտությունների զարգացմանը: Թեման ավելի խորապես ուսումնասիրելու համար նախևառաջ կծանոթանանք օտար լեզվի ուսուցման փուլերին և ոճերին: Այնուհետև կխոսենք օտար լեզուները (անգլերեն) թարգմանական աշխատանքներում կոնցեպտի շուրջ, իսկ վերջում թարգմանության տեսանկյունից կվերլուծենք Էդգար Ալան Պոլի «Լիզեյա» պատմվածքը: Աշխատանքի վերջում կներկայացվի առաջարկություններ թարգմանական աշխատանքը ինչպես կարելի է մտցնել ուսուցման պրոցես:

Վերջին տարիներին անգլերեն լեզվի ուսուցումը սկսելու տարիքային շեմն ավելի ու ավելի է նվազում: Որպես կանոն, չորս տարեկան երեխան համարվում է արդեն լիարժեք պատրաստված դասերին

## Գլուխ առաջին

# Օտար լեզվի ուսուցման փուլեր և ոճեր

Լեզուն ուսումնասիրելու երեք մոտեցում գոյություն ունի.

- Կառուցվածքային մոտեցում, որտեղ լեզուն դիտվում է որպես քերականական էլեմենտների միմյանց կապակցված համակարգ
- Ֆունկցիոնալ մոտեցում, որտեղ լեզուն հանդիսանում է որոշակի գործառույթների արտահայտման և իրականացման միջոց
- Ինտերակտիվ մոտեցում, որտեղ լեզուն հանդիսանում է սոցիալական հարաբերությունների ստեղծման ու հաստատման գործիք:

Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ լեզվի յուրացումն ընթանում է հինգ փուլերով<sup>1</sup>.

### Փուլ 1

**Լուռ/ ռեցեպտիվ կամ նախավերարտադրման փուլ** (անգլ.՝ Silent/Receptive or Preproductive) Այս փուլում սովորողի բառապաշարն ընդգրկում է ավելի քան 500 ռեցեպտիվ (պասիվ) բառ (բառեր, որոնք հասկանալի են, բայց ոչ կիրառելի) և հնարավոր է օտար լեզվի միջոցով բացատրել նոր բառերի իմաստը: Այս փուլը հաճախ ներառում է լուռ ժամանակահատվածը, որի ընթացքում սովորողը չի կարող խոսել, բայց կարող է կատարել ասածը, օրինակ՝ կանգնել կամ փակել դուռը, ժեստով կամ գլխի շարժումներով ասել այո կամ ոչ, այլ կերպ ասած փոխել իր վարքագիծն օտար լեզվով ստացված տեղեկության արդյունքում:

### Փուլ 2

**Վաղ վերարտադրման փուլ** (անգլ.՝ The Early Production Stage): Այս փուլում սովորողի բառապաշարն ընդգրկում է մոտ 1000 ռեցեպտիվ (ակտիվ) բառեր՝ (բառեր, որոնք հասկացվում և գործածվում են): Այս շրջանում ուսուցողն օգտագործում է մեկ կամ երկու բառից կազմված արտահայտություններ, օրինակ՝ այո, ոչ, բարև, ով, ինչ, երբ հարցական դերանուններով կազմված հարցեր և այլն:

### Փուլ 3

**Խոսքի ի հայտ գալու փուլ** (անգլ.՝ Speech Emergence Stage) Այս փուլում բառապաշարն ընդգրկում է մոտ 3000 բառ: Հաղորդակցման համար սովորողը կարող է գործածել կարճ բառակապակցություններ և պարզ նախադասություններ, կարող է կիրառել երկխոսություններ, պարզ հարցեր տալ, և կարող է պատասխանել պարզ հարցերին:

### Փուլ 4

**Լեզվական միջին հմտության փուլ** (անգլ.՝ The Intermediate Language Proficiency Stage)

---

<sup>1</sup> Haynes 2007 pp 29-35

Խոսքի ի հայտ գալու փուլից հետո բառապաշարն ընդգրկում է մոտ 6000 բառ, սովորողը սկսում է կազմել բարդ նախադասություններ, կարծիքներ հայտնել, ճշտումներ կատարել, մտքեր փոխանակել և այլն:

### Փուլ 5

**Լեզվական բարձր հմտությունների փուլ** (անգլ.՝ The Advanced Language Proficiency Stage) Մինչ այս փուլի ավարտը սովորողը զարգացնում է որոշակի մասնագիտական բովանդակալից բառապաշար և կարող է լիարժեք կերպով մասնակցել քննարկումներին:

Որոշակի փուլից սկսած կարելի է խոսել լեզվի ոչ թե յուրացման (acquisition), այլ սովորելու (learning) մասին, նկատի ունենալով, որ այդ փուլում լեզվական կարողությունների զարգացումը կազմակերպված և նպատակային բնույթ ունի:

## Օտար լեզվի ուսուցման մեթոդները

**Քերականական թարգմանության մեթոդ** (անգլ.՝ The Grammar Translation Method): Այս մեթոդը հիմնված է գրավոր թարգմանության և ընթերցանության վրա: Այս դեպքում սովորաբար կազմվում են տեքստեր, որոնք ուղղված են որոշ քերականական կանոնների մշակմանը: Հիմքում ընկած են բառուսուցումը, ուղղագրությունը, քերականությունն ու քերականորեն հարուստ տեքստերի գրավոր թարգմանության միջոցով պրակտիկան: Հիմա այս մեթոդն օգտագործվում է մեծած լեզուներն ուսումնասիրելու համար:

**Աուդիո – լեզվական մեթոդ** (անգլ.՝ Audio-lingual method): Այս մեթոդի էությունը նրանում է, որ սովորողն անընդհատ լսում ու կրկնում է օտար լեզվով ձայնագրությունը:

**Լեզվի իրավիճակային ուսուցում** Բանավոր մոտեցում (անգլ.՝ Situational language teaching (Oral approach))

Հիմնված է լեզվի կառուցվածքի վրա: Սովորողը կրկնության միջոցով սովորում է առավելագույնս հաճախ օգտագործվող բառերն ու արտահայտությունները և դրանք անմիջապես օգտագործում պրակտիկայում: Այստեղ բանավոր խոսքը իշխում է գրավոր խոսքի վրա և առավելագույն ուշադրություն է դարձվում սխալների վրա, որոնք կարող են թույլ տրվել բանավոր խոսքի ընթացքում:

**Ուղղորդված պրակտիկա** (փորձառություն) (անգլ.՝ Directed practice): Այս դեպքում սովորողն անընդհատ կրկնում է արտահայտությունները մինչև վերջիններիս մեխանիկորեն անգիր անելը: Այսպես տուժում է սովորողի բառապաշարն ու լեզվի ճկունությունը, սակայն հասնում ենք լեզվի հիմնային (բազային) արտահայտությունների ավտոմատ տիրապետմանը:

**Ուղղակի մեթոդ** (անգլ.՝ The direct method):Նախատեսվում է, որ օտար լեզուն ուսուցանվում է մայրենի լեզվի նման, այսինքն ինքը, սովորեցնելու պրոցեսն անցկացվում է հենց օտար լեզվով, իսկ մայրենի լեզվի օգտագործումն այդ ընթացքում առավելագույնս բացառվում է: Մեթոդի գաղափարը օտար լեզվի «բնական» յուրացումն է, ինչպես մայրենի լեզվի դեպքում:

**Խոսակցական ուսուցում** (անգլ.՝ Communicative language teaching) Նախատեսում է ուսումնասիրվող լեզվի օգտագործումը ոչ միայն հանձնարարություններ կատարելու այլև դասավանդողի և մյուս սովորողների հետ շփվելու համար: Այն ներառում է այնպիսի ինտերակտիվ վարժություններ, ինչպիսիք են երկխոսությունները, դերախաղերը, խմբային աշխատանքները:

## Գլուխ երկրորդ

# Օտար լեզուները թարգմանական աշխատանքներում

Հասարակության զարգացման գործում առաջնային տեղ ունի գրականությունը, հատկապես օտար աղբյուրներից թարգմանվող գրականությունը: Գիտության և տեխնիկայի արագընթաց զարգացումը մեծացնում է թարգմանական գրականության պահանջարկը: Թարգմանվող գրականությունը գրեթե մշակույթային դերն է կատարում տվյալ ժողովրդի համար, ինչ բնագիծը:

Ն.Բ.Կոնրադը գրել է. «Թարգմանության ասպարեզում ամեն մի գրականություն անհատական և համարյա ինքնուրույն ստեղծագործություն է, որը համաշխարհային գրականության մեջ միաժամանակ հանդես է գալիս որպես ինքնուրույն բարձրարժեք ստեղծագործություն»: Թարգմանվող գրականության մեջ միահյուսվում են օտար և մայրենի լեզուների իմացությունը, համապատասխան հոգեբանական տրամադրվածությունը, ինչպես նաև ընդհանուր մտահորիզոնները: Հետևաբար «թարգմանական պրոցեսը կապված է լեզուների փոխադարձ համաձայնեցվածության հետ»: Թարգմանության արվեստն այնքան հին է, որքան գրականությունը: Թարգմանիչները կարևոր դեր են ունեցել լեզուների և մշակույթի պատմության մեջ: Առաջին գիրքը՝ թարգմանված բազում լեզուներով Ասվածաշունչն է: Գրքի թարգմանությունը, ինչպես և բնագիծը ստեղծագործական մեծ աշխատանք ու նվիրում է պահանջում: Թարգմանությունը կարևոր դեր ունի տարբեր երկրների ու ժողովուրդների մշակույթային, պատմական, քաղաքական, տնտեսական կյանքում: Այլ կերպ ասած, օտար լեզու սովորել նշանակում է բացայտել նոր գաղափարներ, միջառարկայական նոր կապեր, ծանոթանալ տվյալ լեզվով խոսող հանրության պատմությանը, մշակույթին, սովորույթներին եւ կենցաղին:

Թարգմանությունն ունի յուրահատկություն յուրաքանչյուր լեզվի համար, ուստի ինչպես ընդհանուր, այնպես էլ առանձնակի մոտեցումներ է պահանջում տարբեր լեզուների դեպքում: Անշուշտ կարևոր է ազատ թարգմանությունը: Ճշգրտությունը (կամ հավատարմությունը) և դիպուկությունը (կամ թափանցիկությունը)՝ թարգմանության երկակի սկզբունքները, շատ հաճախ, բայց ոչ միշտ անհամաձայնության մեջ են: 17-րդ դարի ֆրանսիացի քննադատներից մեկը ներմուծել է «գեղեցիկ անհավատարիմները» արտահայտությունը՝ նկատի ունենալով, որ թարգմանությունները, ինչպես կանայք, կարող են լինել կամ հավատարիմ, կամ գեղեցիկ, բայց ոչ երբեք երկուսը: Ճշգրտությունն այն չափն է, որքանով որ թարգմանված տեքստը փոխանցում է սկզբնաղբյուր տեքստի իմաստն առանց աղավաղման: Խոսքային գործունեության զարգացման հաջողությունը ապահովող հիմնական գործոն են վարժությունները և մեծապես կարևորելով թարգմանության դերը օտար լեզվի ուսուցանման գործընթացում:

*Որ՞ն է թարգմանչի նպատակը՝* այն է, այնպես անել, որ նյութը կարդալիս ընթերցողը չզգա, որ դա թարգմանություն է: Դրա համար ձգտում ենք բնական լեզու օգտագործել: Այդ դեպքում նյութը գրավիչ է լինում ընթերցողի համար, և նա հաճույքով է կարդում այն, ասես վայելում է իր քիմքին հաճելի համեղ ուտելիք:

Ամենակարևորը սովորողը օտար լեզվի ուսուցման և հաղորդակցման ընթացքում սովորողը ակամայից ձեռք է բերում բառապաշար, քերականություն, հնչյունաբանություն, ճիշտ արտասանություն, ավտոմատացված յուրացմանը, որը և սովորողին տալիս է խոսքամտածողական գործունեության զարգացում և օտար լեզվի ահագին պաշար:

«Լեզուն նման է հասարակ սերմից ծլած մի ծաղկի, որն օրըստօրե աճելով՝ ավելի ու ավելի գեղեցկանում, հասնում է կատարելության գագաթնակետին, այնուհետև, ասես ծերանալով, սկսում է խոնարհվել, եւ մենք, անտեղյակ նրա զարգացման ընթացքից, տեսնում ենք նրա վախճանը:

## Գլուխ երրորդ

# Թարգմանական մեթոդի կիրառումը օտար լեզվի դասավանդման գործընթացում

Օտար լեզվի դասավանդումը եղել և մնում է կրթական գործընթացի կարևորագույն ուղղություններից մեկը: Դասավանդման նորագույն մեթոդների մշակման և ժամանակակից տեխնոլոգիաների զարգացման հետ մեկտեղ՝ փոխվում են նաև լեզուն սովորելու նախընտրությունները: Արդի աշխարհում, աստիճանաբար ավելի գերադասելի են դառնում համակարգչային (նաև առցանց) թեստերը, հարցաշարերը, վարժությունները, բազմակի ընտրություն (multiple choice) պարունակող թեստերը, լսողական ընկալումը ստուգող թեստերը, տեքստի ընկալումը ստուգող բազմակի ընտրությամբ հարցաշարերը, վարժությունները և այլն: Գիտելիքների գնահատման նպատակով կիրառվող և լեզվական հմտությունների զարգացմանը նպաստող միջոցների նմանօրինակ բազմազանությունը, դեռևս նախորդ դարի երկրորդ կեսին, աստիճանաբար, դուրս մղեց թարգմանությունը տարբեր վարժություններ պարունակող թեստային հարցաշարերից: Այսօր կիրառվող թեստերի մեծամասնությունը կազմված է բազմակի ընտրությամբ վարժություններից: Այս թեստերն, անշու՛շտ, ունեն մեծ գործնական արժեք և առավելապես նպաստում են սովորողների գիտելիքների ամրապնդմանն ու լեզվական հմտությունների զարգացմանը: Թեստերի միջոցով է իրականացվում գիտելիքների ստուգումն ու գնահատումը. դրանք նաև մեծ դեր ունեն անցած նյութը է՛լ ավելի ամրապնդելու գործում: Հարկ է նշել, սակայն, որ թարգմանության դերը նույնպես կարևոր է գիտելիքների ինչպես ձեռքբերման, այնպես էլ ստուգման և գնահատման գործում:<sup>2</sup> Թարգմանությունը մշտապես եղել է օտար լեզվի դասավանդման հիմքում, քանի որ դրա միջոցով է ստեղծվել կապը մայրենի լեզվի հետ: Դեռևս վաղ ժամանակներից՝ որպես օտար լեզվի ուսուցման առավել արդյունավետ մեթոդ, կիրառվում էր Քերականական-թարգմանական մեթոդը, որը հետագայում, սակայն, տարբեր լեզվաբանների կողմից արժանացավ քննադատության /Palmer, Larsen-Friman & Anderson, Rivers և այլն/: Դրան նպաստեց Բերլիցի /Berlitz, 1887/ կողմից առաջ քաշված Ուղղակի մեթոդի (Direct Method) կիրառումը, որը կտրականապես ժխտում էր Քերականական-թարգմանական մեթոդի արդյունավետությունը՝ ուսուցման գործընթացում առավել արդյունավետ համարելով ուղիղ հաղորդակցումը:<sup>3</sup> Լեզվի ուսուցման մեջ թարգմանության կիրառման մեթոդը հաճախ անտեսվել է: Ավելին, շատ

<sup>2</sup> . Berlitz M. D. The Berlitz method for teaching modern languages. First Book. New York. The Berlitz School, 1909.

<sup>3</sup> . Berlitz M. Méthode Berlitz. New York, 1887.

լեզվաբաններ այն համարում են ժամանակատար և անխմաստ հավանաբար այն պատճառով, որ այն երբեմն ասոցացվում է ավանդական Քերականական-թարգմանական մեթոդի հետ: Այս մեթոդի էությունը կայանում է նրանում, որ դրա կիրառմամբ լեզուն դասավանդվում է յուրաքանչյուր բառ թարգմանելու միջոցով: Դրանում քերականությունն ու բառապաշարը սովորողին ուսուցանվում են թարգմանության ու սերտման միջոցով: Թարգմանությունը, որպես ուսուցման մեթոդ, շատ քննադատությունների է արժանացել և թեստային համակարգի ներմուծման հետ մեկտեղ՝ համարվել է լեզվական իմաստի մեխանիկական փոխանցում մի լեզվից մյուսը: Ավելին, շատ մասնագետներ անտեսում են լեզվական այս կարևոր գործիքի օգտակարությունը, համարելով այն ոչ համապատասխան՝ սովորողի հաղորդակցական գործունեության իրականացման համար /Brown, 2007; Larsen-Freeman & Anderson, 2011; Thompson, 2012; Celce-Murcia, 2001; Harmer, 2007, Krause, 1916/: Ըստ Բրաունի, ուսումնական գործընթացում թարգմանությունն «անհարմար» գործիք է լեզու սովորելու համար, քանի որ ուղղակի հաղորդակցումն ու անմիջական շփումն առավել կարևորվում են : Այդուհանդերձ, գոյություն ունեցող կարծիքների բազմազանության հետ մեկտեղ, թարգմանությունը եղել և մնում է ուսուցման գործընթացների արդյունավետությունն ապահովող կարևորագույն գործիքներից մեկը: Այն կիրառվում է թե՛ օտար լեզվի դասավանդման ընթացքում, թե՛ գրականության, լեզվաբանական գիտելիքների, տեսական և գործնական գիտելիքների փոխանցման նպատակով:<sup>4</sup> Հենց թարգմանության շնորհիվ է տեղի ունենում հաղորդակցումը տարբեր ազգերի, մշակույթների միջև: Ուստի, թարգմանությունը ոչ միայն չպետք է դուրս մղվի ուսուցման գործընթացներից, այլ, ընդհակառակը, անհրաժեշտություն կա, որպեսզի դասավանդողների կողմից մշակվի համապատասխան մեթոդաբանություն՝ օտար լեզվի դասավանդման ծրագրերում թարգմանությունը՝ որպես լեզու ուսուցանելու կարևոր միջոց ներառելու նպատակով: Կարևոր է նկատել, որ օտար լեզվի դասավանդման գործընթացում թարգմանության կիրառումը մեթոդաբանական առումով անփոխարինելի դեր ունի: Թարգմանության միջոցով է սովորողը կարողանում ճանաչել իրեն անձանոթ բառերը, ընկալել նախադասությունները, այնուհետև տեքստերը և այլն: Լեզվի ուսուցման սկզբնական շրջանում սովորողը թարգմանության միջոցով կապ է ստեղծում մայրենի լեզվից արդեն ծանոթ առարկաների, երևույթների և օտար լեզվում դրանց համարժեքների միջև: Թարգմանությունը նշանակալի դեր ունի նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում օտար լեզվի դասավանդման գործընթացում: Այստեղ օտար լեզվի ուսուցման մեթոդներն ու բովանդակությունն էապես տարբերվում են հանրակրթական դպրոցներում կամ ավագ դպրոցներում

<sup>4</sup> . Brown H. D. Teaching by Principle. An Interactive Approach to Language Pedagogy. Third Edition. New York: Pearson Longman, 2007.

կիրառվող մեթոդներից: Բարձրագույն ուսումնական հաստատություններում մասնագիտական օտար լեզվի ուսուցանումը փոխում է դասավանդվող նյութի բովանդակությունը: Այս դեպքում ուսանողը ծանոթանում է իրեն արդեն ծանոթ օտար լեզվի մի նոր ոլորտի, նոր շերտի հետ: Հատկանշական է, որ մասնագիտական հատուկ տեքստերի հետ ծանոթանալիս՝ ուսանողները, հաճախ, կանգնում են առաջին հայացքից անհաղթահարելի թվացող խոչընդոտի առջև, քանի որ այն օտար լեզուն (այս դեպքում՝ անգլերենը), որ նրանք սովորել են մինչ այդ, մեծապես տարբերվում է այն անգլերենից, որը սկսում են սովորել հատուկ մասնագիտական տեքստերի վերլուծության և մեկնաբանման միջոցով: Փորձը ցույց է տալիս, որ մասնագիտական տեքստերի ուսուցման այս գործընթացում առավել արագ են կողմնորոշվում այն ուսանողները, ովքեր ունեն բավարար գիտելիքներ և կարողանում են օտար լեզվի բառային միավորներն ու քերականական կառույցները նույնացնելով մայրենի լեզվի համարժեքների հետ՝ ընկալել տեքստը և անխոչընդոտ անցում են կատարում դեպի ուսումնասիրվող լեզվի նոր ոլորտ: Նման դեպքում ուսանողը տեքստից դուրս է գրում կամ առանձնացնում է մասնագիտական ոլորտին առնչվող այն բառերը, որոնք անծանոթ են, բայց կարողանում է տեքստը հաջողությամբ թարգմանել (օգտվելով բառարանից)՝ շնորհիվ հենքային գիտելիքների:

Տարբեր մեթոդների կիրառմամբ իրականացվող դասերի ընթացքում ձեռք բերված մեր փորձի ամփոփման և վերլուծության արդյունքում կարող ենք փաստել, որ համապատասխան հենքային գիտելիքների բացակայության պարագայում, պատկերը բոլորովին այլ է, քանի որ նոր մասնագիտական բառապաշարի ընկալմանը հաճախ խոչընդոտում է քերականական կառույցների թերի իմացությունը: Նման իրավիճակում ուսուցանումն առավել դժվար է դառնում, քանի որ ուսուցչի առջև դրվում է միաժամանակ մի քանի խնդիր: Այդ խնդիրները լուծելու և հաղթահարելու նպատակով, դասավանդողը փորձում է զարգացնել ուսանողի՝ քերականական գիտելիքները; բառապաշարը; ընթերցանական հմտությունները; լսողական ընկալման հմտությունները և այլն: Ավելին, նոր մասնագիտական բառապաշարի ներմուծմանը զուգընթաց՝ ուսուցիչը իր առջև խնդիր է դնում զարգացնելու աշակերտի՝ տեքստի ընկալման հմտությունները, ինչպես նաև վերարտադրելու հմտությունները, որի համար կիրառվում է թարգմանության մեթոդը:<sup>5</sup> Թարգմանելով նոր բառապաշարը և օգնելով ուսանողին ընկալել այն համապատասխան համատեքստում՝ դասավանդողը կապ է ստեղծում մայրենի և օտար լեզուների միջև: Թարգմանելու միջոցով լիարժեք ընկալելի դարձնելով տեքստը՝ հնարավոր է դառնում սովորողի մոտ զարգացնել նաև բառափոխման (paraphrasing) հմտությունները. երբ ուսանողն արդեն լիովին ընկալել և յուրացրել է նոր բառապաշարը՝ կարելի է ամրապնդել այն բառափոխման միջոցով: Այս

<sup>5</sup>. Brown H. D. Principles of language learning and teaching (5th ed.). Hoboken, NJ: Pearson ESL, 2006.

հմտության զարգացումը նույնպես շատ կարևոր է օտար լեզու դասավանդելիս: Այս մեթոդը նպաստում է, որ աշակերտի նոր ձեռք բերած բառապաշարի գիտելիքներն է՛լ ավելի կայունանան. քանի որ, երբ աշակերտը կարողանում է նախադասությունը կամ տեքստի ցանկացած հատված վերարտադրել՝ փոխարինելով որոշակի բառեր իրենց հոմանիշներով կամ բացատրություններով, ապա, կարելի է փաստել, որ նոր բառապաշարը լիովին ընկալվել և յուրացվել է: Ավելին, բառափոխման հմտության շնորհիվ աշակերտը նաև հեշտությամբ կարողանում է տեքստը վերարտադրել թե՛ բանավոր և թե՛ գրավոր կերպով: Այստեղ կարևոր է նաև բառիմաստի ճիշտ կիրառումն ըստ համապատասխան համատեքստի: Այն է՝ երբ ուսանողին հանձնարարվում է բառափոխում կատարել՝ պետք է վերջիններիս օգնել ճիշտ կատարել հանձնարարությունը, քանի որ շատ հաճախ, դեռևս բավարար փորձ չունեցող ուսանողները սխալ են կատարում հանձնարարությունը՝ մեխանիկորեն փոխարինելով բառերը որոշակի հոմանիշներով: Այս դեպքում խախտվում է տեքստի իմաստը, քանի որ ոչ բոլոր հոմանիշներն են ճիշտ ընտրվում: Ավելին, տարբեր բառեր պահանջում են տարբեր նախդիրներ կամ կապեր, որոնց առումով նույնպես ուսանողը պետք է ուշադիր լինի, պետք է կարողանա անսխալ փոխակերպել նախադասությունը և կատարել համապատասխան փոփոխությունները՝ ճիշտ փոխանցելով իմաստը:

Թարգմանությունը կարևոր դեր ունի նաև այլ լեզվական հմտությունների զարգացման գործում. ընթերցանության, լսողական ընկալման, գրելու, բանավոր խոսքի զարգացման և այլն: Այս բոլոր հմտությունները զարգանում են թարգմանելու հմտությանը տիրապետելու շնորհիվ: Ընդ որում, լեզվի ուսուցման այն փուլում, երբ ուսանողն արդեն գրեթե ամբողջությամբ տիրապետում է մասնագիտական հատուկ բառապաշարին և անձանոթ տեքստից դուրս գրվող նոր բառերի քանակը զգալիորեն նվազում է, գրավոր թարգմանելու անհրաժեշտությունն ավելի քիչ է: Այս դեպքում աշակերտը կարողանում է տեքստը կարդալ և (արդեն ավելի սեղմ ժամանակահատվածում) վերարտադրել (պատմել), այդ թեմայի շուրջ կամ հենց տեքստի բովանդակության հիման վրա գրել համառոտ շարադրանք: Համառոտ շարադրանքը նպաստում է գրելու, շարադրելու հմտությունների զարգացմանը և ուսանողն արդեն կարողանում է ինքնուրույն շարադրություն կամ ակնարկ գրել որևէ թեմայի շուրջ: Լսարանում թարգմանական հմտությունները զարգացնելու տարբեր մեթոդների շարքում կարելի է առանձնացնել ընթերցանությունը: Սա ուսանողների համար առավել հետաքրքիր և արդյունավետ է դառնում հատկապես խմբային աշխատանքի ձևով: Այսպես՝ ուսուցիչը ընտրում է տեքստեր, կամ հոդվածներ (արդի հոդվածներ կարելի է ընտրել տարբեր կայքերից, օրինակ՝ [www.wef.com](http://www.wef.com), [www.bbc.com](http://www.bbc.com), [www.nytimes.com](http://www.nytimes.com)), բաժանում է դասարանը երկու կամ երեք խմբի և հանձնարարում է կարդալ, թարգմանել, վերարտադրել և մեկնաբանել հոդվածները որոշակի ժամանակահատվածում (3-7 րոպե): Պետք է նշել, որ շատ կարևոր է ժամանակի կարգավորումը (timing), քանի որ սեղմ ժամանակահատվածների

սահմանումը մեծապես խթանում է աշակերտներին՝ ավելի արագ կատարելու տրված հանձնարարությունը: Խմբերը, միմյանց հետ մրցելով, փորձում են հնարավորինս արագ կատարել առաջադրանքը: Անձանոթ տեքստը թարգմանելուց և մեկնաբանելուց հետո՝ ծավալվում է քննարկում. տեքստը լիարժեք ընկալելու պարագայում՝ աշակերտները կարողանում են մեկնաբանել, վերարտադրել, քննարկել տեքստը, ինչպես նաև պատասխանել տրված հարցերին: Այս հմտության զարգացումը շատ կարևոր և արդիական է, քանի որ աշակերտը հետագայում կարողանում է այս հմտությունը կիրառել նաև տարբեր միջազգային քննություններ (TOEFL, IELTS) հանձնելիս: Կարևոր է տեքստերի ընտրության հարցում որոշակի չափանիշների կիրառումը: Այս առումով, խորհուրդ է տրվում նախապատվությունը տալ ոչ շատ երկար, համեմատաբար, ավելի համառոտ տեքստերին: Այսպիսով. տեքստի բառապաշարը պետք է համապատասխանի աշակերտների գիտելիքներին, ինչպես նաև պետք է պարունակի նոր բառապաշար; տեքստի թեման պետք է լինի աշակերտների հետաքրքրությունների շրջանակներում. սա խթան է հանդիսանում, որպեսզի աշակերտները ազատ խոսեն և քննարկեն թեման, ակտիվ մասնակցություն ունենալով ծավալվող գրույցներում ու քննարկումներում:<sup>6</sup> Նոր (անձանոթ) բառապաշարի ներմուծումը (բացատրություն, մեկնաբանություն), նույնպես կարևոր է. Ուսուցիչը աշակերտին է ներկայացնում անձանոթ բառերը և դրանց բազմակի իմաստները՝ օգնելով նրանց կողմնորոշվել, թե տվյալ համատեքստում, տեքստի հատկապես այդ հատվածում ի՞նչ իմաստով է տվյալ բառը գործածվել, կամ ի՞նչ իմաստ է արտահայտում: Թարգմանական հմտությունների զարգացման մեկ այլ միջոց է հայերենից անգլերեն թարգմանությունը, որը նույնպես դասարանում կարելի է իրականացնել խմբային հանձնարարության ձևով: Օրինակ՝ ուսուցիչը ընտրում է հայերեն տեքստեր կամ հոդվածներ, աշակերտներին բաժանում երկու կամ երեք խմբի (ըստ աշակերտների թվի) և հանձնարարում թարգմանել՝ փոխանցելով հիմնական իմաստը (render): Այնուհետև համադրվում են աշխատանքի արդյունքները, համեմատվում են խմբերի մեկնաբանությունները, քննարկվում են կիրառված բառերն ու դրանց համարժեքները և այլն: Այսպիսով, ամփոփելով կարող ենք նշել, որ թարգմանությունը կարևոր դեր ունի ուսուցման գործընթացում. դրա կիրառումը բարձրացնում է աշակերտի՝ լեզվական ընկալումը, բարելավում է լեզվական հմտությունները և նպաստում է մտքերի ճիշտ կառուցմանը: Այն, միաժամանակ, լուծում է տարբեր խնդիրներ. տեքստի ընկալում, վերարտադրում, բառապաշարի ամրապնդում, մտքերի շարադրում, կառուցում և այլն: Անփոխարինելի է թարգմանության դերը, քանի որ այն կիրառվում է ոչ միայն որպես լեզվի դասավանդման գործիք, այլև ըստ անհրաժեշտության՝ գործածվում է լեզվի տարբեր ոլորտներում:

<sup>6</sup> Celce-Murcia M. Teaching English as a Second or Foreign Language. Third Edition. Language Learning, 2001.

## Գլուխ չորրորդ

### Խորհրդածություններ Էդգար Ալան Պոլի «Լիգեյա» պատմվածքի հայերեն, ռուսերեն և անգլերեն թարգմանությունների շուրջ

Ոճական վերլուծությունից առաջ փորձենք տալ դիպաշարի համառոտ բովանդակությունը:

Պատմվածքը սարսափ ժանրի է, պատմվում է գիսավոր հերոսի առաջին կնոջ՝ Լիգեյայի մասին, ներկայացվում է նրա մահը, ապա հերոսն ամուսնանում է երկրորդ անգամ լեյդի Ռովենայի հետ, ամիսներ անց մահանում է նաև երկրորդ կինը: Մահվան գիշերը, երբ ամուսինը նստած է կնոջ մարմնի առջև, պատանքի մեջ փաթաթված մարմինը բարձրանում է տեղից. հեղինակը երկրորդ կնոջ դիակի մեջ տեսնում է առաջին կնոջը՝ Լիգեյային: Մարսափ պատմություններ գրելու վարպետ Էդգար Ալան Պոլն իր ստեղծագործություններում հաջողության է հասնում նախ և առաջ բառերի ճիշտ ընտրության, շրջուն շարադասության, սարսափազդու դարձվածքների և խոսուն մակդիրների կիրառության շնորհիվ: Բառերի համապատասխան կրկնությունները, բարդ նախադասությունների տեղին կիրառությունները ստեղծում են երաժշտական ներքին ուժով, որն էլ ավելի սարսափելի է դարձնում տեքստը: Ուստի հեղինակի հաջողությունը կայանում է նրա՝ լեզվաոճական ճիշտ միջոցների ընտրության մեջ: <sup>7</sup>

Տեսնենք՝ վերոհիշյալ հատկանիշները որքանով են տուժել, պահպանվել կամ էլ գերազանցվել թարգմանություններում: Նախ՝ անդրադառնանք թարգմանությունների հեղինակներին և ժամանակաշրջաններին: Էդգար Ալան Պոլի «Լիգեյա» պատմվածքը տպագրվել է 1838 թ.-ին, ռուսերեն թարգմանությունը (թարգմ. Ի. Գուռովա) կատարվել է 1972 թ.-ին, իսկ հայերենը (թարգմ.՝ Արտաշես Էմին)՝ 1983 թ.-ին: Բնագրի և թարգմանությունների միջև առկա շուրջ 134 և 145 տարիների բացը փոքր-ինչ բարդացնում է թարգմանիչների գործը, քանզի փոփոխվող ժամանակաշրջանի հետ ինչ-որ չափով փոխվում է նաև լեզվամտածողությունը:

---

<sup>7</sup> Պոլ Էդ., Մղձավանջներ և անուրջներ, Եր., 1983:

Անդրադառնանք թարգմանությունների ոճական արժեքներին՝ առանձնացնելով լեզվական մակարդակները:

### Հնչյունական մակարդակ

Հնչյունաբանական տեսանկյունից քննելով երկու թարգմանությունները՝ հայերեն տարբերակում կարելի է ընդգծել միայն լեռնի օտարաբանությունը, որ թարգմանիչը փոխառել է բնագրից, մինչդեռ ռուսերեն տարբերակում առկա է ледяи ձևը: Այս ձևի կիրառումը արժեքավոր է նրանով, որ հայերեն տարբերակին տալիս է ինչ-որ ամերիկյան երանգ և կնոջ նկարագրության ժամանակ կերպարը դարձնում առավել տիպական, քան կարող էին դարձնել տիկի կամ լեռի ձևերը:

### Բառային մակարդակ

Թարգմանությունների արժեքը առավելապես երևում է բառային շերտը քննելիս: Բնագրի որոշ էական բառեր և արտահայտություններ փոփոխվել են կամ առհասարակ դուրս մնացել թարգմանություններից: Այս տեսանկյունից շատ ավելի արժեքավոր է ռուսերեն թարգմանությունը, որ մեծապես պահպանում է բնագրային կարևոր բառերն ու արտահայտությունները:

Համեմատենք՝

Հայերեն տարբերակում պարզապես ասվում է. «չեմ կարողանում հիշել...»

Անգլերենում՝ “*I CANNOT, for my soul, remember*”.

Ռուսերենում՝ “*Ради спасения души я не в силах был бы вспомнить*”.

Այս նախադասության առկայությունը ավելի պարզորոշ է ցույց տալիս ոչ միայն հիշել չկարողանալու փաստը, այլ նաև հիշելու մեծ և սպարդյուն ջանքերը, որոնք անգամ համեմատվում են հոգու փրկության հետ:

Կամ՝ «*Փորձելով վերհիշել վաղուց մոռացված մի բան*»:

“*To recall to memory something long forgotten...*”.

“*Пытаясь воскресить в памяти нечто давно забытое...*”.

Հայերեն տարբերակի սովորական նախադասության կողքին ռուսերենում ունենք ամբողջական պատկեր՝ փոխաբերություն: Բաց են թողնված հերոսի կողմից ցավոտ հիշողությունները վերհիշելու փորձերը, և արտահայտված է միայն հիշելու փաստը:

Բառերի և արտահայտությունների կրճատումը բերում է ոչ միայն իմաստի աղճատման, այլ նաև կարևոր մակդիրների, փոխաբերությունների, համեմատությունների բացակայություն:

Համեմատենք՝

*“It was the radiance of an opium-dream -a airy and spiri-lifting vision more widely diyine than the phantasies which hovered vision about the slumbering souls of the daughters of Delos”.*

*“Это было сияние опиумных грез – эфирное, возвышающее дух видение, даже более фантазмагорически божественное, чем фантазии, которые реяли дремлющими душами дочери Делоса”.*

*«Նրա դեմքը ողողված էր ափիոնից ներշնչված անուրջներին հատուկ եթերային մի փայլով, որն իր վեհությամբ գերազանցում էր նույնիսկ Դելոսի դուստրերին՝ հոգին պարուրող չքնաղ երազներին»:*

Միայն այս նախադասության մեջ, ի տարբերություն ռուսերենի, հայերեն տարբերակում երևակայության և իրականության միջև կատարվող գեղեցիկ համեմատությունից բացի բացակայում է նաև *“фантазмагорически”* տերմինը, որ ցավի, երազի, սիրո և օփիումի յուրօրինակ միաձուլումն է մեկ բառի մեջ: Այս բառի բացակայությամբ հայերեն տեքստը ռճական մեծ կորուստ է ունենում:

Ուշադրություն դարձնելով նաև տեքստի հնչյունաբանությանը՝ երևում է անզլերեն տարբերակի երաժշտականությունը, ինչն առավել ցայտուն է բնագրում. *“Slunsering souls of the daughter of Delos...”*:

Ակնհայտորեն երևում է հեղինակի բանաստեղծական լեզուն, որն իր արտահայտությունը չի գտել հայերեն տեքստում: Հայերեն տարբերակում բացակայում է նաև *«օփիոնե անուրջ»* խոսուն մակդիրը (*“opium-dream”, “опиумных грез”*), որ փոխարինված է *«ափիոնից ներշնչված անուրջներ»* արտահայտությամբ: Բառերի կորուստներից զերծ չէ նաև ռուսերեն թարգմանությունը, որտեղ մակդիրի բացակայությունը ռճական երանգավորումի թերությունից բացի բերում է նաև կարևոր խորհրդանիշի բացակայության:

Համեմատենք՝

“*Ligea*” that I bring before mine eyes in fancy the image of her, who is no more”.

“*Лигейя – воскрешаю я перед своим внутренним взором образ той, кого уже нет*”.

«*Լիգեյա, կարող է աչքերիս առաջ բերել կերպարը նրա, ով, ավաղ, այլևս չկա*»:

Բնագրում տեսնում ենք “*fancy*” բառը, որը “*fantasy*” (երևակայություն) բառի կարճ տարբերակն է: Սա նորից տեքստ է բերում երևակայականի, իրականի, օփիումի ու ինելացնորության միաձուլումը: Այս տերմինը հատկանշական է Էդ. Պոյի ստեղծագործության համար և դառնում է հեղինակի աշխարհայացքի մի ուրույն խորհրդանիշ, որը, սակայն, բացակայում է երկու տարբերակներում:

Թարգմանությունը կարող է տուժել ոչ միայն բառերի բաց թողնման, այլև դրա փոխարեն նույնիմաստ հոմանիշի կիրառման դեպքում:

Հայերեն տեքստում ունենք. «*Աստվածացման հասնող կրքոտ նվիրվածություն...*» նախադասությունը, մինչդեռ հեղինակը *աստվածացման* բառի փոխարեն կիրառել է դրա *կռապաշտություն* (*idolatry*) հոմանիշ-հականիշը, որը նույնությամբ առկա է նաև ռուսերեն տարբերակներում. “... *пылкая преданность достигала степени ИДОЛОПОКЛОНСТВА...*”:

Հայերեն տեքստում բառն արհեստականորեն փոխված է: Առաջին հայացքից միմյանց իմաստով մոտ այս բառերի հիմքում առկա է հիմնային տարբերություն: Բնագրում սիրած էակի համար կինը դառնում է կուռք, որին հերոսը երկրպագում է, նրանց սերը զուգահեռվում է նախաքրիստոնեական պաշտամունքին: *Աստվածացում* տերմինը, սակայն, այդ ներքին իմաստը չի արտահայտում:

Հայերեն թարգմանությունը աչքի է ընկնում ևս մեկ բացասական հատկանիշով՝ բարձր ոճի բառերի անտեղի կիրառմամբ: Հայ թարգմանիչը որոշ հատվածներում կիրառում է կոնտեքստի համար «արհեստական», ավելորդ զգացմունքայնություն արտահայտող բառերի շարք:

Համեմատենք՝

«*Վեհ ու անբռնազրուսիկ կեցվածք ուներ նա, ինչքան ճկուն ու թեթև էր ճեմունս*»:

“...*the quiet ease, of her demeanor, or the incomprehensible lightness and elasticity of her footfall*”.

*“Непринужденность ее осанки, или непостижимую легкость и грациозность ее походки...”*.

Այս երևույթը տեքստը դարձնում է անբնական և անհամոզիչ, կորչում է հեղինակի արտացոլած պատկերը. չմոռանանք, որ Էդ. Պոյի ընտրած յուրաքանչյուր բառը դիպուկ է և խոսուն:

### **Ձևաբանական մակարդակ**

Ձևաբանական առանձնահատկություններից հատկանշական է միայն հայերեն տեքստում վերաբերականների կիրառումը այն դեպքում, երբ բնագրում դրանք բացակայում են: Այս երևույթը մեծամասամբ կատարվում է տեքստին որոշակի վերաբերմունքային երանգ տալու նպատակով: Բերենք օրինակներ հայերեն թարգմանությունից՝

*«Լիզեյա, կարող է աչքերիս առաջ բերել կերպարը նրա, ով, **սվաղ**, այլևս չկա»:*

*«**Հիրավի**, կամքի խորհուրդը և գորությունն անկարելի է ճանաչել»:*

### **Շարահյուսական մակարդակ**

Շարահյուսական մակարդակում նույնպես երեք տարբերակների տարբերություններն ակնհայտ են:

Անգլերեն և ռուսերեն տեքստերում շատ են կիրառվում շրջուն շարահասություններով կառույցները: Այս հնարքը հեղինակին հնարավորություն է տալիս ընդգծել կարևոր բառերն ու արտահայտությունները՝ տանելով դրանք վերջ: Հայերեն տարբերակում, սակայն, շարահասությունը հիմնականում ուղիղ է, ինչը թույլ է դարձնում իմաստը, և անտեսվում են կարևոր բառերը:

Համեմատենք՝

*“Thing that was enshrouded...”*.

*“Фигура завернутая в саван...”*.

*«Պատանքով փաթաթված կերպարանք...»:*

Շարահյուսական մակարդակի առանձնահատկություններից էական է նաև պարզ և բարդ նախադասությունների խնդիրը: Հատկանիշը շեշտելու նպատակով բնագրում և ռուսերեն թարգմանության մեջ հատկանիշը տրվում է երկրորդական նախադասությամբ, մինչդեռ հայերեն տարբերակում գերակշռում են պարզ նախադասությունները:

Համեմատենք՝

“*She who had been dead...*”.

“*Та, что была мертва...*”.

«*Մեռած կինը...*»:

Ակնառու այս տարբերությունը միանշանակորեն թուլացնում է երկի գեղարվեստական կողմը և նվազեցնում սարսափի ազդեցությունը:

Շարահյուսական հատկանիշներից կարևոր է նաև բառային կրկնությունը, երբ խորը իմաստ արտահայտող բառը կրկնվում է մի քանի անգամ՝ ավելի ազդելով ընթերցողի վրա: Հայերեն տարբերակում մեծամասամբ բացակայում են նաև բառային կրկնությունները:

Օրինակ՝ “*Can I never, can I never be mistaken...*”.

### **Պատկերավորման միջոցներ**

Քննելով պատկերավորման միջոցներում առկա առանձնահատկությունները՝ հարկ էնք գտնում նշել, որ հայերեն թարգմանությունն այս հարցում ևս զիջում է ռուսերենին: Մակդիրի օրինակներ արդեն բերվել են բառային մակարդակի առանձնահատկությունները նշելիս, այժմ նշենք հայերեն տեքստում մակդիրի բացակայության ուրիշ օրինակ:

Համեմատենք՝

“*High moon*” – “*глухая полночь*” – «*կեսգիշեր*»:

Բնագրում և ռուսերեն տարբերակում առկա են փոխաբերություններ, որոնք ավելի պատկերավոր են դարձնում նկարագրությունը, հեղինակը փորձում է ստեղծել վախի

մթնուրտ, հայերենում, սակայն դրանք արտահայտված են մեկ բառով, չկա փոխաբերական իմաստ:

Համեմատենք՝

“...paralyzed” had chilled me into stone...”.

“Парализуя меня, превращая меня в камень...”.

«Ես քարացել էի...»:<sup>8</sup>

Նույն կերպ և համեմատության խոսույն օրինակը, որ կիրառել է հեղինակը, հայերենում կարող է փոխարինվել:

Օրինակ՝

“...hair, it was blacker than the raven wings of the midnight...”.

“Волосы – они были чернее вороновых крыл полуночи...”.

«Մաթի պես սև մազեր...»:

Բնագրում հեղինակը հանդերձյալ աշխարհից վերադարձած կնոջ մազերը առավել վառ պատկերելու նպատակով համեմատում է դրանք կեսգիշերային սև ագռավի թևերի հետ, իսկ հայերեն տարբերակում մազերը պարզապես զուգահեռվում են սաթին (գորշ):

Այսպիսով՝ ուսումնասիրելով Էդգար Ալան Պոյի «Լիգեյա» պատմվածքը և նրա հայերեն, ռուսերեն և անգլերեն թարգմանությունները՝ պարզ է դառնում, որ արձակյի պարագայում բառային, ձևաբանական, քերականական, պատկերավորման հատկանիշներով ռուսերեն թարգմանությունը գերազանցում է հայերենին, այն ավելի մոտ է կանգնած բնագրին և մեծամասամբ արտահայտում է դրա առանձնահատկությունները: Մարսափ ժանրով գրված ստեղծագործության ներքին բոլոր գծերը կարողանում է արտահայտել անգլերեն թարգմանությունը, այդ տարբերակը կարողավ ընթերցողին հասու է դառնում ստեղծագործության մեջ առկա ահագնացող սարսափը, բառի փիլիսոփայությունը, մինչդեռ հայերեն տարբերակն ավելի թույլ է և պատկերում է սոսկ բովանդակությունը, այստեղ բացակայում է սարսափը կերտող բառի արվեստը, ինչը հատուկ է Էդգար Պոյին:

---

<sup>8</sup> <http://poestories.com/read/ligeia>

# Եզրակացություն և առաջարկություններ

Թարգմանությունն արվեստ է, նաև՝ հաղորդակցման միջոց: Երկրագնդի բազմաթիվ ազգերի միջև հարաբերություններն անհնար կլինեին, եթե չլինեին թարգմանիչները: Հնուց ի վեր պետություններն օգտվել են այն մարդկանց՝ թարգմանիչների ծառայություններից, որոնք տիրապետում են երկու կամ ավելի լեզուների և միմյանց խոսքը փոխանցում լավ և վատ առիթներով հանդիպող կողմերին: Թարգմանությունը նաև մշակույթ է. բնօրինակից որևէ ստեղծագործություն թարգմանելով՝ այն մատչելի է դառնում այլ մշակույթ կրողների համար, ավելին՝ դառնում նրա մշակույթի մի մասնիկը: Տարբեր երկրների աշխարհայացքի ընդլայնման և հարաբերությունների հաստատման գործում թարգմանիչների ներդրումն անգնահատելի է: Թարգմանիչներն ունեն նաև իրենց նվիրված միջազգային տոն, որը նշվում է սեպտեմբերի 30-ին: Այն հիմնականում առնչվում է Սուրբ Ջերոմի՝ 4-5դդ. հռոմեացի քրիստոնյա գիտնականի հետ, որին Հռոմի կաթոլիկ եկեղեցին սրբացրել է՝ Աստվածաշունչը երբայերենից լատիներեն թարգմանելու համար: Այդ թարգմանությունը համարվում է բնօրինակին ամենամոտը, քանի որ Սուրբ Ջերոմը, իր աշխատանքը կատարելիս, որը տևել է երկու տարի, օգտագործել է ամենաբազմազան աղբյուրներ՝ բովանդակության ճշգրտությունն ապահովելու նպատակով: Այդ օրը բազմաթիվ թարգմանչական միությունների անդամներ իրենց երկրներում միջոցառումներ են կազմակերպում՝ նվիրված թարգմանչական գործին և միմյանց շնորհավորում այդ տոնի կապակցությամբ: Օտար լեզվի մեջ թարգմանական մեթոդը ուսուցման պրոցես մտցնելու համար առաջարկում ենք մի քանի տարբերակ: Քանի որ քերականական-թարգմանական դասերը, սովորաբար, անցկացվում են սովորողների մայրենի լեզվով, աշակերտները քերականական կանոնները սովորում են դրանք պարբերաբար կրկնելու եղանակով, իսկ հետո կիրառում են կանոնները՝ կատարելով քերականական վարժություններ և թարգմանելով նախադասություններ ելակետային լեզվից դեպի թարգմանվող լեզու և հակառակը: Ավելի շատ ուշադրություն է դարձվում թարգմանվող նախադասությունների ձևին, քան բովանդակությանը: Երբ աշակերտները հասնում են ավելի բարձր մակարդակի, նրանք կարող են թարգմանել ամբողջական տեքստեր: Թեև տերը հաճախ ներառում են դասական տեքստերի թարգմանություն: Սովորաբար դասընթացը չի ներառում լսելու կամ խոսելու պրակտիկա, և շատ քիչ ուշադրություն է դարձվում արտասանությանը կամ լեզվի որևէ առանձին հաղորդակցական ասպեկտի: Կիրառվող հմտությունը նախ և առաջ կարդալն է, և հետո միայն համատեքստի թարգմանությունը: Թարգմանության համար բացի քերականական կանոններից տիրապետելուց անհրաժեշտ է նաև բառապաշար: Այդ պատճառով բառապաշարի ձեռք բերման համար առաջարկում ենք մի քանի մեթոդ: Մեթոդաբանությունը հիմնված է

երևակայական իրավիճակի ստեղծման և երեխայի կամ ուսուցչի կողմից որոշակի դերի որդեգրման վրա:

Բաժանվում են իրավիճակային, մրցութային, ռիթմիկ-երաժշտական և գեղարվեստական:

*Իրավիճակային* ներառում են դերային խաղեր, որոնք նմանակում են հաղորդակցման իրավիճակները որոշակի առիթով: Նրանք իրենց հերթին բաժանվում են վերարտադրողական բնույթի խաղերի, երբ երեխաները վերարտադրում են բնորոշ երկխոսություն՝ կիրառելով այն որոշակի իրավիճակում, և իմպրովիզացիոն խաղերի, որոնք պահանջում են տարբեր մոդելների փոփոխություն:

*Մրցունակ* ներառում է խաղերի մեծ մասը, որոնք նպաստում են բառապաշարի և քերականության յուրացմանը: Դրանցում հաղթում է նա, ով լավագույնս տիրապետում է լեզվական նյութին: Մրանք բոլոր տեսակի խաչբառեր են, աճուրդներ, լոտո, սեղանի խաղեր, հրամանների կատարում և այլն:

*Ռիթմիկ երաժշտական խաղեր* - սրանք բոլոր տեսակի ավանդական խաղեր են, ինչպիսիք են կլոր պարերը, երգերը և պարերը գուգունկերների ընտրությամբ, որոնք նպաստում են ոչ այնքան հաղորդակցման հմտությունների յուրացմանը, որքան խոսքի հնչյունական և ռիթմ-մեղեդիական ասպեկտների բարելավմանը և ոգով ընկղմմանը: լեզուն.

*Գեղարվեստական կամ ստեղծագործական խաղեր* - սա գործունեության տեսակ է, որը կանգնած է խաղի և գեղարվեստական ստեղծագործության սահմանին, որի ճանապարհը երեխայի համար անցնում է խաղի միջոցով: Դրանք, իրենց հերթին, կարելի է բաժանել դրամատիզացիաների (փոքր տեսարանների բեմադրություն անգլերենով), վիզուալ խաղերի(գունազարդման նկարներ) և բանավոր և ստեղծագործական (փոքր հեքիաթների կոլեկտիվ շարադրություն, ոտանավորների ընտրություն).

Խաղի տեխնիկայի հիմնական առավելությունն այն է, որ այն հարմարվող է ցանկացած տարիքի երեխաների համար, դրա օգնությամբ կարելի է զարգացնել ինչպես բանավոր խոսքը, այնպես էլ քերականության, ուղղագրության և այլնի իմացությունը:

## Օգտագործված գրականության ցանկ

1. Haynes 2007 pp 29-35
2. Berlitz M. D. The Berlitz method for teaching modern languages. First Book. New York. The Berlitz School, 1909.
3. Berlitz M. Méthode Berlitz. New York, 1887.
4. Brown H. D. Teaching by Principle. An Interactive Approach to Language Pedagogy. Third Edition. New York: Pearson Longman, 2007.
5. Brown H. D. Principles of language learning and teaching (5th ed.). Hoboken, NJ: Pearson ESL, 2006.
6. Celce-Murcia M. Teaching English as a Second or Foreign Language. Third Edition. Language Learning, 2001.
7. Պո Էդ., Միլանիանցիներ և անուրջներ, Եր., 1983:
8. <http://poestories.com/read/ligeia>